



որին ներկայ էին և մամուլի ներկայացուցիչները: Ընթերթի կառավարիչ զոկտոր Պատրիսյան, բժշկական ընկերության նախագահ զոկտոր Անանյան, մանկաբուժական ինստիտուտի տեսուչ զոկտոր Ֆիշեր, բժշկներ Բաբայան, Ստեփանյան և «Մշակ» խմբագիր Քալանթար իրանց արտասանած սպիտակ ձեռքով ցուցանելով այն անգլիկ օգուտները, որ արտադրում են գիտական ընկերությունները, մամուլի և հասարակության համադրածակցական գործունեությունը այն խնդիրներով, որոնք վերաբերում են ժողովրդական առողջապահության և վարակիչ հիւանդությունների դեմ կռիվը գործում: Դոկտոր Բլինովնուտով մի գեղեցիկ ճառով շնորհակալություններ ցուցաբերեց բժիշկներին, բժշկական ընկերության և մամուլին այն անկեղծ և եռանդուն աջակցության համար, որ նրանք ցույց տուին նրան և աջակցեցին հակաթորախտային ցուցահանդեսի և դասխառնությունների կազմակերպելու գործը:

Հ. Ա.

ՀԱՅՈՒՆՆԵՐ ԲԱՐՈՑՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Կերակր, մարտի 14-ին, առաւօտեան ժամը 12-ին կայացաւ Թիֆլիսի Հայուհայ Բարեգործական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, նախագահութեամբ տիկին Մարիամ Միրիմանյանի:

Այս անգամ, հակառակ նախորդ տարիների սովորութեան, մեր յարգելի հայուհայները շատ պիտի էին կատարելու իրանց քաղաքացիական պարտաւորութիւնը և, արձադանք տալով վարչութեան հրաւերին, մեծ թիւով եկել էին ժողովի, թոյլ չը տալով, որ ժողովը, անդամների պակասութեան պատճառով, յետաձգուի և կայանայ 7 օրից յետոյ, անպատշաճ շատ սահմանափակ թիւի մասնակցութեամբ, ինչպէս կատարվիլ է նախորդ տարիներում: Այս դեպքում, մեր միւս ընկերութիւնները, աղամարդկանց բարեգործական ընկերութիւնը և Դրամատիկական ընկերութիւնը, արգարե, օրինակ պէտք է վերցնեն նախաձեռնող հայուհայներից:

Ընդհանուր ժողովի պարագաների տարեկաններն էին ընկերութեան 1903 թվի հաշիւը, ներկայ 1904 թվի նախահաշիւը, և ընկերութեան պաշտօնատար անձանց ընտրութիւնը:

Հաշիւների ընթերցումից և վերաստուգող յանձնաժողովի զեկուցումներից երեսց, որ ընկերութիւնը ունեցել է 1902 թվին—23,451 ր. 45 կ. գումար, որից անձեռնմխելի գումար 10,000 ր., յատուկ գումար՝ 2000 ր., պահեստի գումար՝ 8500 ր., ծախքի գումար՝ 2951 ր. 45 կոպէկ: Անցեալ 1903 թվին նա ունեցել է 25,715 ր. 28 կ., որից անձեռնմխելի գումար՝ 10,700 ր., յատուկ գումար՝ 3500 ր., պահեստի գումար՝ 8500 ր., ծախքի գումար՝ 3015 ր. 26 կ. և բացի դրանից կան կարմիրք՝ 1050 ր.:

Անցեալ 1903 թվի ընթացքում ընկերութիւնը մուտք ունեցել է ընդամենը 8537 ր. 33 կ., որից անգամակցական վճարներ՝ 1404 ր., նուէրներ՝ 1600 ր., պարգևատրելից, բազարից, ներկայացումից՝ 3125 ր. 53 կ., գումարների 90-ից՝ 861 ր. 30 կ., կար ու ձիւ գրպանից՝ 1186 ր. 22 կ., ձեռագործների ծախսերից՝ 319 ր. 18 կ., խոհանոցի իրերը ծախսելուց՝ 41 ր. 10 կ.: Մարք ունեցել է ընդամենը՝ 6294 ր. 33 կոպէկ., որից կար ու ձիւ գրպանից վրա՝ 5564 ր. 97 կ., բարեգործութեան (նախաձեռնող չքաւորներին և թողաւորները)՝ 485 ր. 84 կ. և գանազան մանր. ծախսեր՝ 243 ր. 52 կ.:

Նախահաշիւով ներկայ 1904 թվի ընթացքում ապավում է մուտք՝ 6930 ր., նոյն աղբիւրներից, ինչ որ 1903 թվին, և ծախք նոյնչափ՝ 6930 ր.:

Թէ հաշիւը և թէ նախահաշիւը հաստատուելին անփոփոխ, որից յետոյ տեղի ունեցան վարչութեան 7 անդամներից հերթով գործելու 3 անդամի, 2 փոխանդամի և վերաստուգող յանձնաժողովի 3 անդամի ընտրութիւնները: Գաղտնի բուժարկութեամբ ընտրվեցին վարչութեան անդամների տ. տ. Մ. Մելիք-Նապակեօղան, Վ. Միրիման, և Ա. Բաբայան, փոխանդամներ՝ տ. տ. Ե. Լիսիցեան և Ե. Ա. Առաքելեան: Վերաստուգող յանձնաժողովի անդամներ տ. տ. Ե. Աթաբեկչեան, Ս. Բաբայան և Ն. Դոբրոսլոնսկայ:

Ընկերութիւնը ունի ներկայումս 189 անդամ:

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԻՆԻ

Մենք արդէն յայտնել էինք, որ Բագուի նաւթադրոշմաբերողների ժողովը յատկացրել է ներկայ պատերազմի ծախքերի համար 100,000 ռուբլի և 50,000 էլ նաւաստորմի շինութեանը. այժմ մայրաքաղաքի լրագրիները հաղորդում են, որ Նորին Մեծութիւն Թաղաւոր Կայսրը բարեհաճել է Իր սեփական ձեռքով գրել այդ առիթով եղած զեկուցումի վրա. «Անկեղծ շնորհակալ եմ նաւթադրոշմաբերողների ժողովից»:

Անցեալ տարի մենք յայտնել էինք մեր ընթերցողներին, որ Ռուսաստանի ներքին հասնագետներում ապրող մի հայուհայ, Շ. Գ., նշանակել էր ուղարկելու մեր խմբագրութեան աղբաւորներին բաժանելու որոշ նպատակ: Այնպէս ըստուգանք նուէրատուից բաժնի և վեց ռուբլի: Այդ գումարը և խմբագրատան մէջ եղած ուրիշ գումարներից մենք բաժանեցինք ձմեռայ ընթացքում յետուն և ութ ռուբլի 40 կոպէկ:

Ձգաւորների օգուտն ստացանք մի անձից, որ իր անունը չէ կամենում յայտնել, 1 ռուբլի, Գ. Մոսեսեանից 6 ռուբլի և Յովսէփեանից (Կոչակար) 3 ռուբլի:

Մարտի 14-ին, Կերակրի օրը, Արտիստական ընկերութեան փոքր դահլիճներէ մէկում հրաւիրված էր Հայոց Դրամատիկական Ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովը: Մի շարքէ էր արդէն յայտարարութիւնները տպւում էին տեղական լրագրիներում, բոլոր 192 անդամները գիտէին ժողովի մասին. գիտէին նոյնպէս, որ նախ իսկ ընկերութեան գոյութեան հարցն է դրվելու ժողովին, որ շատ լուրջ խնդիրներ կան քննելու, որ բազմաթիւ բողոքներ են լսվում... գիտէին, բայց էլ չէին եկել ժողովի: Ընդամենը հաւաքվել էին 34—35 անդամ: Իսկ ամենից հրաշալին այն էր, որ վարչութեան 7 անդամներից եկել էին միայն 4-ը: Բացակայութեամբ փայլում էին վարչութեան անդամներից 3-ը, որոնցից մէկը նոյն իսկ ընդամենը 4—5 ամիս առաջ ընտրված, դեռ «բազմաբարձր գործունէութիւնից» չը յոգնած մի երիտասարդ է: Ժողովը չը կայացաւ, որովհետեւ կանոնադրութեան պահանջով 1/3 մասը (մօտ 64 մարդ) չէր հաւաքված: Նիստը յետաձգվեց, համաձայն նախօրը եղած յայտարարութեան, հետեւել երեքշաբթի օրվան՝ մարտի 23-ին և կայանալու է ժողով, բայց հոգի էլ որ ներկայ լինեն:

Հիւսիսային Կովկասի Մատրոպօլ բաղաւորում մի խումբ եռանդուն և զարգացած կանանց նախաձեռնութեամբ բացվելու է Պետերբուրգի «Կանանց գիւղատնտեսական կըրթութեանը նպաստող ընկերութեան» մի մասնաճիւղ:

Մայրաքաղաքի լրագրիները հաղորդում են, որ երկաթուղիների տոմսակների վրա դրված կարծր խաչի օգտի համար՝ 5 կոպէկանոց տուրքը մտադրութիւն կայ դարձնել 10 կոպէկ: Բացի դրանից մտադրութիւն կայ նոյնպէս նշանակելու մի փոքրիկ տուրք այն բոլոր անձերի վրա, որոնք գնում են երկաթուղային կայարանների ճանապարհորդներին ուղեկցելու համար և որոնք ուզում են դահլիճներից դուրս գալ պարտաւորանքների վրա՝ գնացքը մեկնելու ժամանակ՝ վազմանքի մօտ են նստա բարով ասելու:

Ֆինանսների մինիստրի չըջարեքականի համաձայն, գործարանական հարցերի դիւաւոր վարչութիւնը որոշել է, որ ծխախոտի և մախօրկայի գործարաններում աշուհեան անպայման արգելվում է մանուկների աշխատանքը: Մանուկ են համարվում մինչև 15 տարեկան հասակը եղած բոլոր երեխաները:

Ալեքսանդր Գրիգորովն է ներկայ մարտի 21-ին, ինչպէս հաղորդում է «ՌՈ. ՕԵ.» լրագրի: Երևանի նահանգական դատարանի ժամանակաւոր նիստը քննելու է Ալեքսանդր Գրիգորովն չափ Ամատուռու և Սիմէօն Յարութիւնեանի և Մեծ-Դիւղբեկ գիւղի բաժնատէջ Տէր-Յովհաննէս Յովհաննիսեանից գործը: Դրանք մեղադրվում են իշխանութեանը դիւաւորութիւն անելու մէջ, մի յանցանք, որ նախադրված է պատժական օրէնսդրութիւն 264 յօդուածով: Այդ գործը առաջացել է 1903 թվի յուլիսի 29-ին Ալեքսանդր Գրիգորովն երկաթուղային կայարանում: Մեղադրվողներին պաշտպանելու են Մօսկվայի երրօրեալ հաւատարմար Կ. Մ. Մուրադովը, Թիֆլիսի երդ. հաւատարմար Լ. Ա. Պոմաշովը և Ալեքսանդր Գրիգորովն երդ. հաւատարմար Յ. Ն. Տէր-Մարտիրոսեանը և, վերջապէս Թիֆլիսի երդ. հաւատարմար Ե. Ն. Սարգսյանը: Սյո գործի համար կանչված են 50 վկաներ:

Նոյն լրագրից հաղորդում է, որ այս տարվայ ապրիլի 6-ին Գանձակի նահանգական դատարանում քննվելու է նոյն քաղաքի 46 ընկերների գործը, որոնք մեղադրվում են իշխանութեանը դիւաւորութիւն ցույց տալու մէջ, իսկ դրանցից երկուսը՝ Բերովը և Տէր Մարտիրոսեանը և Աղաջան Սարգսյանին բացի այդ՝ նաև պատժական օրէնսդրութիւն 9-դ և 2-դ մասերի 1459 յօդուածի մէջ նախատեսված յանցանքում: Նիստին կանչված են 97 վկաներ մեղադրողի և նոյնքան էլ պաշտպանների կողմից: Մեղադրվածները հրաւիրել են մի քանի երդուեալ հաւատարմարներ Պետերբուրգից՝ ինչպէս. օրինակ՝ Ա. Ե. Պասովեթին, Ա. Ս. Ջարուշեան, իսկ տեղականներից պաշտպանութիւն են անելու երդ. հաւատարմարի օգնական Լ. Ն. Անդրեւիլովը Բագուից և Թիֆլիսի երդ. հաւատարմար Լ. Ա. Պոմաշովը և Տ. Ն. Յովհաննիսեանը:

«Рус. Вѣд.» լրագրից հաղորդում է, որ շուտով կետեղվայի և Բաթումի խմբագրութիւնով լոյս կը տեսնի մի գիտական-գրական հաւաքածու «Կեպի լոյս» վերնագրով: Ժողովածուի մէջ լինելու են հանգուցեալ Միխայիլով, Կորոնկոփ, Բորովիկին, Վէյնշեյդի, Կոնիկ, Բուդնիկով, Տարբէի և Բոսովիչի և ուրիշների անտիպ գործերը: Ժողովածուի եկամուտը յատկացվում է Պետերբուրգի կանանց բարձրագոյն կուրսերի օգտին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԵՐԲՈՐԳԻ ԵՈՐԴԵՐԸ

Ամերիկան և Ռուսաստանը Ամերիկայի դէպի Ռուսաստանը ունեցած յարաբերութեան խնդիրը ներկայ պատերազմի ժամանակ սաստիկ զրաւեցնում է եւրօպական և ռուս մամուլի ուշադրութիւնը և տեղի է տալիս զանազան թեր և դէմ կարծիքների: «Eclair» ֆրանսիական լրագրում տպված է ֆրանսիական սինատոր Պոլի մի շատ ընդարձակ խօսակցութիւնը ամերիկական մի նշանաւոր պետական գործիչի հետ: Ֆրանսիացի սինատորը չէր կարողանում ամենեւին հասկանալ, թէ ինչ է պատճառը, որ ամերիկական ժողովուրդը թշնամութիւն է տածում դէպի Ռուսաստանը և համակրութիւն դէպի Եւրոպիան: Նրան թւում էր, թէ ամերիկացիների համար ոչ մի հաշիւ չը կայ ունենալ Միացեալ Նահանգների և Չինաստանի մէջտեղ 47 միլիոն ուժեղ եւրօպացիներ, որոնք մտածում են գերիշխանութիւն ձեռք բերել ամբողջ ասիական արեւելքում և տիրել Չինաստանին: Ընդհակառակը, նա կարծում է, որ Ռուսաստանը իր այնպիսի երկաթուղիներով կարող է անգղիս վաճառատնից բնախ ամերիկական արդիւնաբերութեան համար: Չը լինի, որ անգլիացիներն են ազգում ամերիկացիների վրա և սխալեցնում նրանց, որպէս զի կուտեցնեն ազգերը և մէջտեղում իրանք շահվեն: Եւ անա իր այդ տարակուսանքները փարատելու համար ֆրանսիացի սինատորը զիմեց ամերիկական նշանաւոր պետական գործիչին, որ շատ հմուտ է բոլոր արտաքին քաղաքական հարցերին: Ամերիկացի պետական գործիչը պատասխանեց. «Ի՞նչ խառնում էք ամերիկական կառավարութիւնը մամուլի հետ. նրանք մէջ ոչ մի ընդհանուր բան չը կայ: Կառավարութիւնը մտածում է միայն Ամերիկայի շահերի մասին, իսկ լրագրիները գտնվում են Անգլիայի ազգեկցութեան տակ: Բրիտանական կառավարութիւնը դաշնակց է Եւրոպային. «Times»-ը յարձակվում է Ռուսաստանի վրա, իսկ «սոս-բիւր» (յիմար նմանողութիւն) ասիւյում է ամերիկացիներին նոյնը անել»:

Այս ամերիկական գործիչը հաղորդեց, որ ամերիկական կառավարութիւնը ոչ Ռուսաստանի դէմ է, ոչ Եւրոպային, այլ անվտանգութեանը վերջնական դեմ: Միայն Անգլիային վերջնական դեմ անցնելու տարվայ սկզբին, փորձեց իմանալ ամերիկական կառավարութեան կարծիքը չինական գործիքի և Մանչուրիայի դատարկման մասին: Նա հասկացնել տուեց ամերիկական կառավարութեան, թէ չը պէտք է ամերիկացիները ընդդիմանալ պատերազմին:

Ռուսաստանի և Եւրոպայի միջև: Անգլիան այդ անում էր նրա համար, որ կամ ստիպէ Ռուսաստանին զիջումներ անել Միջին-Ասիայում և Պարսկաստանում, կամ անդամաւորեւր Ռուսական ոյծերը, կամ թուրքացի Եւրոպիան, որի ծովային գոտիները վաղուց անհանգրստացնում է նրան, կամ բաժանել Չինաստանը:

Ամերիկական պետական գործիչի խօսակցութիւնը ֆրանսիացի սինատորի հետ արտասովոր չափ Բերլինի լրագրիներում: Եւ անա Բերլինում ապրող մի ամերիկացի՝ Հէյնրի Ուլիսիան, մի յօդուածով, որ տպված է «Ta-geblatt»-ի մէջ, խիստ յարձակից ամերիկական այդ գործիչի վրա. «Եւ գիտեմ ով է, գրում է նա, այդ ամերիկացի պետական գործիչը, դա իրականա-ամերիկական և հակա-անգլիական աղմկալից ազդեցութեանից մէկն է: Նա կամ չարամտութեամբ ստում է, կամ կատարեալ տգէտ է: Ամերիկական մամուլը, ժողովուրդը և կառավարութիւնը—կայացված են միմեանց հետ սերտ կապերով: Մենք համակրում ենք եւրօպացիներին ոչ թէ նրա համար, որ տանջվում են անօրինակ, այլ համակրում ենք Եւրոպային, որովհետեւ մենք համակրում ենք նրա մեծ կուրսը՝ իր ազգային գոյութեան համար Ասիայում և ցանկանում ենք նրան այդ կուրսը կատարեալ աջակցութիւն: Եւ անա մեր համակրութեան պատճառները. 1) Եւրոպիան կուրս է բոլոր ազգերի հաւասարակշռութեան համար, արդիւնաբերական-ստեղծական տեսակետից: 2) ամեն բան ինչ որ Եւրոպիան է, զգուշի է մեզ—ուսական պետական կարգերը, բարբերը, օրէնքները: Նրա վարմունքը իր սեփական բաղադրանքների հետ այնքան հակասում է մեր հիմնական հայեացքներին և բաղադրութեան հիմունքներին, որ մենք ոչ մի կողմից չենք կարող համակրել Ռուսաստանին: Եւ բոլոր լրագրիները այդ կողմից մի և նոյն հակակայք ունեն: Միայն «Եւրոպիայի հերթադր» միկուտացած է, բայց այդ լրագրը ոչ որ էլ չէ կարգում (?): Մեր կառավարութիւնը պէտք է պահպանէ խիստ չէզոքութիւն, որովհետեւ այդպէս է պահանջում միջազգային իրաւունքը, բայց մեր նախագահը և նրա կարիքները վերջի վերջոյ նոյնպիսի մարդիկ են, ինչպէս և միացեալներն և եւ կարծում եմ, որ թէ նրանք և թէ բոլոր 70,000,000 ամերիկացիները անկեղծօրէն յաղթութիւն են ցանկանում եւրօպացիներին և ռուսական բռնութեան (?) Զննում երկար ժամանակ:

Շատ հաւանորում ամերիկացի է այս Հէյնրի Ուլիսիանը, առում է «Новое Время» լրագրից, որից և քաղում ենք այս բոլորը, բայց չը լինի նա այն շատիցն է, որ, նրա համարադրացիները, ամերիկական աղաւ դրօշակի տակ, դրաւում են սեւեր լինչմամբ, կամ գուցէ նա երուսաղէմի գաւառից է:

(Новое Время)

Չինաստանը սպառազինվում է: Լոնդոնի «Morning Post» լրագրի Վաշինգտոնի թղթակիցը հաղորդում է, որ իբր Լէյպցիգի ամերիկական հիւպատոսը հաղորդել է, թէ աստուրիական մի ֆրանս անգղիս պատուէրներ է ստացել չինական կառավարութեան կողմից պատերազմական նիւթերի պատրաստութեան համար: Առնատարակ այդ ձևունաւ անձի տեղեկութիւններով, չինական կառավարութիւնը գէնքի և պատերազմական պաշտպանութեան գնումներ է անում: Վաշինգտոնում այդ հանգամանքը անհնգապատութիւն է առաջացնում, որովհետեւ այնտեղ գիտեն, որ ազգեկցիկ փոխարքանից շատ ցանկանում են մասնակցել ռուս-եւրօպական պատերազմին:

(Новое Время)

Եւրօպացիները աշխատում են նոր գրանաւորներ գնել: Թիւրքիայի համար Ֆրանցիսկայի նաւաշինարանում կառուցանվում է մի գրահատը «Մեհրիլէ» անունով: Այս օրերս Թիւրքիան, որ նոյնպէս սպառազինվելու ձգտումներ է ցույց տալիս, վճարեց իր առեւծ պատուէրի գինը, բայց նա ստացաւ անմիջապէս առաջարկութիւն Եւրօպային կողմից գիշել իրան այդ գրահատը, ստանալով կրկնակի գին: Սակայն, ինչպէս հաղորդում է «Frank. Zeit.» լրագրից, Թիւրքիան մերժեց այդ առաջարկութիւնը:

(Новое Время)

Ռուսները պատրաստվում են յարձակուել դիւր եւ ընդունում: «Times» լրագրի հաղորդում են Վէյ-Հայ-Վէյից, թէ ծովային Մախարովի գաղութ ի վեր ռուսներին տակտիկան, որ մինչև այդ պաշտպանողական բնաւորութիւն ունէր, փոխվեց և ռուսները այժմ գործում են հոսանքով, օգուղիով կոտորել—ակա-նանաւերից: Փետրվարի 26-ի կողմի ժամանակ հակառակմարտը այնքան խիզախ էր, որ նա-



№ 81.